

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ծառայության բաժինը (այսուհետ՝ բաժին) ՀՀ ոստիկանության կրթահամալիրի (այսուհետ՝ կրթահամալիր) կառուցվածքային ստորաբաժանում է, որի հիմնական նպատակը կրթահամալիրում ներքին կանոնակարգի և կարգապահական կանոնակարգի, ծառայության բնույթից բխող աշխատանքների իրականացումն է:
2. Բաժինն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ Սահմանադրությամբ, «Ոստիկանությունում ծառայության մասին», «Ոստիկանության մասին», «ՀՀ ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին», «Ոստիկանության զորքերի մասին», «Զինվորական ծառայության անցնելու մասին», ՀՀ օրենքներով, ՀՀ ոստիկանության ակադեմիա» պետական հիմնարկը վերակազմակերպելու և ՀՀ ոստիկանության կրթահամալիր պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշումով, ՀՀ ոստիկանության պետի հրամաններով, ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի հրամաններով, ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ներքին իրավական ակտերով, սույն կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով:
3. Բաժնի լրիվ անվանումն է.
Հայերեն՝ «**Ծառայության բաժին**»:
Ռուսերեն՝ «**Отдел службы**».
Անգլերեն՝ «**Service Department**».
4. Բաժինը, որպես ՀՀ ոստիկանության կրթահամալիրի կառուցվածքային ստորաբաժանում, ստեղծվում, վերակազմակերպվում և լուծարվում է ՀՀ ոստիկանության պետի հրամանով:
5. Բաժինը սույն կանոնադրությամբ սահմանված խնդիրների լուծման նպատակով համագործակցում է կրթահամալիրի այլ ստորաբաժանումների հետ:

6. Սույն կանոնադրությունը հաստատվում, նրանում փոփոխություններ և լրացումներ կատարվում են ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի հրամանով:

ԲԱԺՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ, ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

7. Բաժնի խնդիրներն են.

1) հետևել ծառայողների (սովորողների) բարոյահոգեբանական և հայրենասիրական դաստիարակության, ոստիկանի երդման հավատարմության, ծառայողական-կատարողական կարգապահության և էթիկայի կանոնների ամրապնդմանը,

2) ծառայողների (սովորողների) հետ անհատական զրույցների միջոցով պարզել նրանց գործնական, անձնական, բարոյական հատկանիշները և սոցիալական վիճակը, ծառայողների նկատմամբ ցուցաբերել մշտական հոգատարություն և հնարավորության սահմաններում աջակցել խնդիրների լուծմանը,

3) ուսումնական ստորաբաժանումների պետերի, ինչպես նաև կադրերի և անձնակազմի հետ տարվող աշխատանքների բաժնի հետ համատեղ իրականացնել ուսումնադաստիարակչական, մշակութային և սպորտային միջոցառումների նախապատրաստական աշխատանքներ,

4) կադրերի և անձնակազմի հետ տարվող աշխատանքների բաժնի հետ համատեղ մշակել համապատասխան մրցույթների կազմակերպման կարգը, ինչպես նաև քննարկել անձնակազմի համալրման հարցերը,

5) հսկողություն իրականացնել անցագրային ռեժիմի պահանջների կատարման նկատմամբ,

5) կազմակերպել և ժամանակին իրականացնել ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի կողմից հաստատված օրակարգով շարային ստուգատեսը,

6) անձնակազմի (սովորողների) հետ տարվող աշխատանքներին վերաբերող հարցերով անցկացնել խորհրդակցություններ, քննարկել բողոքները, պարզաբանել միջադեպերը, վարել անհատական դաստիարակչական զրույցներ

7) կազմել ՀՀ ոստիկանության կրթահամալիրի անձնակազմի «Հավաք» ազդանշանով ծանուցման սխեման, իրականացնել այդ ուղղությամբ համապատասխան միջոցառումներ,

8) կազմել և հաստատման ներկայացնել կրթահամալիրի պատասխանատու սպաների հերթապահության ժամանակացույցը,

9) կազմակերպել անձնակազմի ծառայությունը կրթահամալիրի տարածքից դուրս ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ:

8. Բաժնի գործառույթներն են.

1) կազմակերպել, ղեկավարել և վերահսկել կրթահամալիրի ներքին կանոնակարգի և կարգապահական կանոնակարգի պահպանման աշխատանքները,

2) վերամշակել, ծառայողական անհրաժեշտությունից ելնելով փոփոխության ենթարկել կրթահամալիրի հերթապահի, հերթապահի օգնականի, ներքին ծառայության վերակարգի և հսկիչ անցագրային կետերի աշխատակարգը,

3) հետևողականություն ցուցաբերել կրթահամալիրի ծառայողներին և սովորողներին խրախուսանքներ տալու կամ կարգապահական տույժի ենթարկելու ընթացակարգերի ժամանակին և պատշաճ կատարման նկատմամբ,

6) վերլուծել և ամփոփել անձնակազմի հետ տարվող աշխատանքների արդյունքները և միջոցներ ձեռնարկել դրանց բարելավման համար,

7) հսկողություն իրականացնել զենքի, ռազմամթերքի, հատուկ միջոցների օգտագործման, պահպանման և ժամանակին մաքրման աշխատանքների կազմակերպման նկատմամբ,

8) հետևողական լինել անձնակազմի և սովորողների հետ՝ ծառայողական կարգապահության ամրապնդման, բարոյահոգեբանական վիճակի բարելավման և մասնագիտական որակի բարձրացման ուղղությամբ,

9) ուսումնասիրել և շարունակաբար բարելավել զորահավաքային և քաղաքացիական պաշտպանության ուղղությամբ տարվող աշխատանքները,

10) հսկողություն սահմանել բաժնում կատարվող գաղտնիության ռեժիմի և գաղտնի փաստաթղթերի պահպանման նկատմամբ,

11) հսկողություն սահմանել կուրսի պետի աշխատանքի կատարման նկատմամբ,

12) հետևել համընդհանուր շարային ստուգատեսի կանոնների պահպանմանը և ժամանակին իրագործմանը՝ ըստ սահմանված կարգի,

13) կազմակերպել և վերահսկել կրթահամալիրում ուստիկանության ծառայողների արտաքին տեսքի և համազգեստի կրման կանոնների պահպանման նկատմամբ,

14) վերահսկողություն սահմանել տազնապի և «Կրթահամալիրի տարհանման» աշխատանքների, «Արտակարգ իրավիճակներում գործելու» օրացուցային պլաններով նախատեսված աշխատանքների պատշաճ մակարդակով կազմակերպման ուղղությամբ,

15) հետևողականություն սահմանել բաժնում իրականացվող միջոցառումների և դրանց հաշվետվողականության ժամանակին և պատշաճ կատարման նկատմամբ:

III. ԲԱԺՆԻ ՊԵՏԸ և ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԸ

9. Բաժնի անմիջական ղեկավարումն իրականացնում է բաժնի պետը, ով նշանակվում է ՀՀ ուստիկանության պետի հրամանով:

10. Բաժնի պետը՝

1) Պլանավորում, կազմակերպում, և վերահսկում է բաժնի ընթացիկ գործունեությունը,

2) ՀՀ ուստիկանության կրթահամալիրի պետին ներկայացնում է կադրերի տեղաբաշխման վերաբերյալ առաջարկություններ,

3) ապահովում է բաժնի հիմնական գործառույթների իրականացումը, լուծում դրանցից բխող հիմնախնդիրները, աշխատողներին տալիս համապատասխան ցուցումներ և հանձնարարականներ, ապահովում է այլ ստորաբաժանումների հետ բաժնի փոխգործակցությունը,

4) Կրթահամալիրի գիտական խորհրդում հանդես է գալիս համապատասխան հաշվետվություններով և զեկույցներով,

5) ապահովում է բաժնի հիմնական գործառույթների իրականացումը, լուծում դրանցից բխող հիմնախնդիրները, ծառայողներին տալիս համապատասխան ցուցումներ և հանձնարարականներ, համագործակցում է նաև այլ ստորաբաժանումների հետ,

6) կազմակերպում և վերահսկում է բաժնում տարվող գործավարությունը, իրականացնում է բաժնի խնդիրների լուծման հետ կապված այլ աշխատանքներ,

7) բաժնի պետի և աշխատակիցների գործառույթային պարտականությունները հաստատվում են ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի կողմից,

8) բաժնի աշխատակիցների իրավունքները և պարտականությունները սահմանվում են ՀՀ օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ, ներքին իրավական ակտերով և սահմանված կարգով հաստատված այլ փաստաթղթերով,

9) բաժնի պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է բաժնի պետի տեղակալը կամ համապատասխան կարգով նշանակված անձը: